

Նարանական խորհրդի մի քանի անդամներին անհաճոյ եղանակ արդէն նրանց վիճակը որոշուած է: — Նրանք սահմանադ են լինուած ուրիշ տեղ որոնելու Մեր վերև յիշած «The schoolmaster» թերթը վիպական ձևով հաղորդուած է մի գեղագու ուսուցչուհու կեանքից, որի մէջ նկարագրած է, թէ ինչպէս այդ ուսուցչուհին ստիպուած է եղել կամ հրաժարական տալ և կամ ամուսնանալ իւր իշխանաւորներից մէկի — մի տղէտ խանութպանի հետ: Աւելորդ է ասել որ համանման գեպքեր շատ անդամ տեղի են ունենուած նաև մեր կեանքուած: տղէտ հոգաբարձուներ կամ տանուաէրներ աղաներ քիչ չեն մեր մէջ:

Սակայն Անգլիայուած հալածուած ուսուցիչներին և ուսուցչուհիների իրաւունքներին պաշտպան է հանդիսանուած մեր արդէն յիշած «Ուսուցիչների ազգային միութիւնը»: 1893 թուին այդ ընկերութիւնը 24,000 անդամէ ունեցել: Այդ ընկերութիւնը գաւառներուած ձիւղեր ունի և այնպիսի ոյժ է ստացել, որ պարլամենտուամ իւր ձայնը լսելի է անուամ: Եթէ ընկերութեան անդամներից մէկն յանիրաւի պաշտօնից գուրս հանուի, ընկերութիւնը դատ է սկսուած յանցաւորների գէմ: Նա նոյնպէս պաշտպանուած նաև իւր աշակերտի ծնողներից վիրաւորանքների ենթարկուած ուսուցչին: Այդ ընկերութիւնը համարձակ քննադատուած է ուսումնարանական արքունի վերատեսուչների տուած հաշիւնը: Պէտք է ասել, որ բոլոր ուսումնարաններն ել տարին մի անդամ են թարկուած են այդ վերատեսուչների քննութեան: շատ անդամ այդ քննութեան հետեւանքից է կախուած լինուած ուսուցչի ապագան: Քննութիւնից յետոյ ուսումնարանը համարուի «լաւ» ուսումնարաններից մէկն: այն ժամանակ ուսուցիչը աւելի ոռօճիկ է ստանուած: իսկ ոռօճիկ յաւելումն աւելի շատ է լինուած: Եթէ վերատեսուչը քննած ուսումնարանը «գերազանց ների մէջ կը հաշուէ: իսկ քննութեան հետեւանքն անաջող լինի: այն ժամանակ ուսուցիչը զրկուած է պաշտօնից: Կարելի է երեակայել թէ ինչ զգալի կլինին ուսուցիչները գէպի այդ վերատեսուչը: «Քննութեան երկիւղը ուսուցչին արգելք է լինուած իւր գործի մէջ երջանկութիւն ու հանգիստ գտնել և միւնոյն ժամանակ դա նպաստուած է ուսուցչի վարկը աշակերտների առաջ ընկնելուն: քանի որ աշակերտները շատ լաւ գիտեն: թէ ուսուցչի համար ինչ մեծ նշանակութիւն ունի այն քննութիւնը՝ ասումէ յարգելի head—master—ներից մէկը: Յիրաւի, գործի էռութիւնը նրա մէջ է: թէ ո՛քան անաշառ է վերատեսուչը: Մի տարրական գարուում վերատեսուչը մի շատ գժուարին թերթարու-

թիւն է անում տասնամեայ աշակերտներին: և առ լիս մի գժուար վճռելի խնդիր: հենց իմանասնրա նպատակն է եղել կարել ուսուցչին, որ և աջողել է: Սակայն անմիջապէս թէ թելագրութեան նիւթը և թէ թուարանական խնդիրը հրատարակումէն The schoolmaster-ի մէջ զանազան ծաղրական բացատրութիւններով ու ծանօթութիւններով: Այսպիսով «ուսուցիչների ազգային միութիւնը» և մամուլ պաշտպան են հանդիսանուած հալածուած ուսուցչի իրաւունքներին՝ հրապարակ հանելով աշառուի վերատեսչի անուն ազգանունն ու գործերը:

Անգլիայի ուսումնարանական գործի աջողութիւնն էլ նրա մէջ է: որ հնարաւորութիւն կայ ազատորէն ամենայն կեղծոտ և անազիւ գործ հրապարակ հանուելու:

Թարգմ: Մ. Դ.

ԱԶԳԱՅԻՆ

ՍՈՒՐԲԻ ԷԶՄԻԱԾԻՒՄ

Սերունդներ են գոլիս և սերունդներ գընուամ, սակայն Արքիդորի կանգնած Տաճարը անշարժ է մնում:

Այսպիսի կենսական ոյժ և տեական կարողութիւն ունին մի միայն այն հաստատութիւնները, որոնք ուսուցուածն նոյն իսկ կենդանութեան անպատճ աղբիւրից:

Սուրբ Էջմիածնի հիմքն Խոքը բանն Աստուած է որոշել: այս է հայ ազգի գարաւոր աւանդութիւնն, այս է և նորա անխափանելի հաւատքը, որ արտայայտուած է երկուբառուով: Էջմիածնի:

Եթէ գործն է հաւատի մեծագոյն ապացոյն, ուրիմն հայ ազգը վաղուց արդէն ապացուցել է իւր այդ հաւատը: Հեթանոսական հալածանքին յաջորդել են անթիւ և անհամար այլ տեսակ հալածանքներ: սակայն չէ խսիստուել ոչ Ա. Էջմիածնի հիմքը և ոչ հայի հաւատքը գէպի նաւ:

Այժմեան քրիստոնեայ աշխարհը զարմանքով է թերթուած մեր և եկեղեցու պատմութիւնը, որ անընհատ հարապարին մի շատ գժուարին թերթարու-

շղթայ է: Քրիստոսի անդրանիկ եկեղեցին իւր հիմնարկութեան օրուանից սկսած՝ զեռ չէ գաղաքարել հալածուելուց, նրա նահատակների ցանկը գեռ չէ լրացել, նրա դաւանած վարդապետութեան վկաների արիւնից գեռ չէ կշտացել երկիրը: Բայց հաղար և վեց հարդիր տարի մաքառող այդ եկեղեցին կորցրել է արգեօր մի օր իւր հաւատը: Արգեօր կայ մի պատմական շրջան, ուր հայ եկեղեցին տկարանար իւր հաւատի մէջ, կայ արգեօր գոնէ մի մութը պատմական միշտակութիւն այդ մասին:

Աստուծոյ ընտրեալ ժողովրդի ենրա պատմութեան հետ եթէ մի թեթև համեմատութիւն անգամ անելու լինենք, առաջնութեան պատիւը անշուշտ մեր նահատակ եկեղեցուն պիտի տանք:

Գանիցս արգեօք եգիպտական ծառայութիւնից աւելի ծանր լուծ է կրել այս նոր խրայէլը, բայց թողել է նա երբէք իւր հայրերի Աստուծուն:

Անապատների մէջ քառասնամեայ թափառման փոխանակ՝ չորս հարիւրամեայ թափառման է ենթարկուել Ա. Գրիգորի հօտը աշխարհիս չորս կողմերում: սակայն երբէք չէ տկարացել: Հայրենիք, ընտանիք և երկրային ամենայն բարեկ փոխանակել է նա իւր հարց Աստուծոյ: Հետո որովհետեւ նրա հաւատը անխախտ է եղել:

Հրեայ գերիները բարելացւոց գետերի եղերքին Արօնի երգն էին երգում և գտնն գերութեան մէջ սոսկալի երգումն էին անում լըմոռանալու երուսաղէմը: Այդ երգումն արել են և մեր նախահայրերը, ինչքան էլ նուաստացել հալածուե և օտարացուել են իրենց մայր եկեղեցւոյ շրջականերից, խորն արմատ է ձգել նրանց սրտերում սէրը գէպի Ա. Էջմիածինը: Թշուառութեան գարերում մեր նախահայրերը չեն մոռացել իրենց ապագայ սերնդին կտակ թողնելու թէ «Ա. Գրիգորի Ա. աջի վերայ է հիմնուած հայոց ազգը»:

Միթէ կարիք կայ յիշատակելու և միառմի թուելու դրա ապացոյցները:

Միթէ է Ա. Էջմիածինը չէ եղել, որ պահպանել է այն նուիրական կապը թոլոր հայերի մէջ սկսած հեռաւոր Ա. հաստանից մինչեւ Հնդկաստան:

Միթէ նոյն Ա. Էջմիածինը չէ, որ այսօր շաղկապումէ՝ թոլոր հայերին սկսած Խաղաղական ովլիանոսի կղզիներից մինչև Ամերիկայի խորքերը:

Կարիք կայ արգեօք յիշատակելու սցստեղ մերձաւոր անցեալից փառաւոր օրինակներ:

Վերջին գարերի ընթացքում յը տեսնուած մի հանդէս տեղի ունեցաւ 1892 թուին Ա. Էջմիածնի Մայր Տաճարում: Կաթուղիկոսական թափուր գահի արժանաւոր յաջորդ ընտրելու համար ամբողջ հայութիւնը միացաւ Ա. ուսացաց բարեկնամ կառավարութեան հովանու տակ և յագուրդ տուաւ ամբողջ ազգի և եկեղեցու տեհանքին: Այդ տեհանքների մաքնացումն Ա. Գրիգորի գահակալի անձնաւորութեան մէջ տեսաւ եկեղեցին ու ազգը:

Խոստովանելով այս պատմական մէջ փառը, մնումէ մեզ Ա. Էջմիածնի յաղթանակը ի բարին գործ գնել: Միանգամ ևս բուռն կերպով զգալով Ա. Էջմիածնի շաղկապոդ զօրութիւնն ու արժանանալով վայելերու նրա՝ արգասիքը, պիտի գործենք քանի ժամանակները ձեռներին է:

Աստուածային զօրութեան և օգնութեան ապաւինելու ամէն մի քրիստոնէի պարտքն է, սակայն ապաւինել պէտք է հաւատով և գործով: Խրաքանչիւր գործի յաջողութեան առհաւատչեան միաբանական ոյժն է, այդ ոյժը մեզ ընձեռումէ Ա. Էջմիածինը: Գործենք ուրեմն, գործենք այն «Յանաբեր» կանգնելու համար, որի մասին միշտ երգում ենք Ա. Էջմիածինն յիշելու ժամանակ:

Մեր Ա. եկեղեցին ամէն անգամ հաստիրումէ իւր հաւատացեալներին, «Էւայ+ Հենայուր» ուսուցչ պարագան լայցու: Այս հրաւերը նա մեզ կարգումէ, երբ իւրաքանչիւր անգամ առիթ է լինում Ա. Էջմիածնի անունը

մեղ յիշեցնելու։ Լսենք այդ հրաւերի ձայնին և գործակցենք վերաշինութեան։

Բայց սրչափ մեծ է այդ վերաշինութեան կարիքը։ Այսօր ամբողջ ազգն աչք զրած սպասում է եկեղեցականութեան վերականգնուն, աւերակ եկեղեցիների և վաճքերի կառուցման անհապատացած վանքերի վերակազմութեան ժաղավրդի կրօնական բարձրական կրթութեան աստիճանի բարձրաց մասն, մայրենի լեզուի և զրականութեան բարգաւաճման և այլն։ Են։

Այս սմենին գտրման տանելու համար ընդհանուր գործակցութիւն է պէտք, հոկայական ձեռքերով օժտուած անհատն անդամ կարող չէ միայնակ այսքան բազմազան և բազմաթիւ գործերի կատարումն յանձն տանել։

Միութիւնը ոյժ է, ահա մեր գարու նշանաբանը, ինչո՞ւ չինք կամենում իսկական զաւակներ լինել մեր գարու։

Ով փոխանակ գործելու խօսում է, նա հողմարած է, ով իւր գործակցութիւնը միայն խծրծելով է աւարտում նա յանցագործ է։

Ահա մի տարի է արգեն, որ «Է-Շ ՃԱՐԴԻՇՏԵ ՀԱՅՐ» կոչման արժանացած եկեղեցու Պետրա ամենքին գործի է հրաւերում»։

Ամենքս էլ գիտակից ենք մեր եկեղեցու պէտքերին, ամենքս էլ քաջ զիտենք այս կարիքները, որ պիտի լրացումն ստանան, ուստի և վէճ կարող չէ լինել մեր անելիքի մասին։ Եկեղեցու անհրաժեշտ կարիքներն հոգուն համար կարօտութիւն կայ ձեռների և ժամանակի։

Ժամանակը կը լրացնի մեր սրահները, երբ մեր ձեռները բացուին։ Ա. Էջմիածնի սէրը, որ միշտ վառ է եղել հայ սրտերում, թող մեղ թելադրէ պարտքներս կատարելու։

Ծանր է արդարեւ մեր ժամանակը։ Մեր սուրբ եկեղեցին գեռ նահատակների թափած արիւնով է ներկուում։ Այն տաճար ներից, սրտեցից սրբասացութեան ձայներ պիտի հնչեն այսօր լսումենք յսւսահա-

տութեան հառաջանքներ։ Այն եկեղեցին, որ պիտի պայծառանար իւր պաշտօնեաների ջանքով, այսօր ներկուումէ գեռ ևս նրանց արիւնով Աւրեմն գեռ չեն անցել փորձութեան դարերը, եկեղեցին գեռ ևս կարոտէ նոր նահատակների։

Միանանք մեր ազօմքներով և խնդրենք Ամենակալից փորձութեան օրերի վախճանը։

Միանանք գործերով և սփոփենք մեր հաւատակից նահատակների սրտերը, օգնութեան ձեռք կարկառենք նրանցն, որոնք Ա. Դրիգորի մեղ աւանդած ժառանգութեան պահպանութեան համար այսօր մոքառումեն։

Համբերատար է մեր նահատակ եկեղեցին, նա դիմացել է շատ հալածանքների և յաղթող է հանգիստացել, մեր յոյսն անգրդուելի է, այսուհետեւ ևս պիտի գիմանայ նա ամենայն փորձաճքի, եթէ մինչեւ իսկ պէտք լինի նորանոր նահատակութիւնների։

«Եկեղեցին ոչ մարդու ձեռքի շինուածք է, ոչ թագաւորների պարգև և ոչ ճարտարութեան արուեստ, նրա հիմքը ոչ ներքինները կարող են շարժել և ոչ վերինները զրդուցնել»։ Այս հաւատով են ապրել մեր նախնիք, որ այնքան սիրուն կիրազով արտադրացել է Նղիշէ սուրբ վարդապետը, այս հաւատով պիտի ապրենք և մենք։

Մեր այս պարտքն է ահա, որ միշտ լիշեցրել է Ա. Էջմիածնը և որ այսօր կրկին լիշեցնումէ։



ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ.

ՊԱՌԱՍՏԱՆՈՒՄ.

ՄԱՅԻ ԱԹՈՒԹ.

ՆՈՐԻՆ ՕՆՈՒԹԵԱՆ
ՎԵՀԱՓԱԾ ՀԱՅՐԱՎՈՒՏԻ ՄԵԿՆՈՒՄԻ
Ի ՏՓՈԽԻՄ.

Դեկտեմբերի 18-ին, կիւրակէ օրը, ազգին Վեհափառ Հայրապետը, Մայր Աթոռիցս մեկ-